

ԳՐԱԽՑՍՈՒԹԻՒՆ

Ա. Verzeichnis der armenischen Handschriften, der königlichen Universitätsbibliothek v. Franz Nikolaus Fink u. Levon Gjandschezian. Tübingen, 1907, VI+276.

Բ. Atlas zum Katalog der armenischen Handschriften.

1. Armenische Paläographie. Erläuterungen zu den schriftproben aus den armenischen Handschriften der königl. Universitätsbibliothek zu Tübingen. v. Franz Nicolaus Fink.

2. Kleinarmenische Miniaturenmalerei. Die Miniaturen des Tübinger Evangeliiars Ma XIII. I. J. 1113, bezw. 893 n. Chr. v. Strzygowski, Tübingen 1907.

Ա.

Նախնեաց մատենագրութեան և պատմութեան ուսումնասիրութեան համար շատ կարևոր նշանակութիւն ունի հայ ձեռագրերի մանրամասն ցուցակագրութիւնը, ծաժանելի, անկատար և պատահականութեան ենթակայ կլինի հայ բանասիրական գիտութիւնը մինչև չլրացուին և չհրատարակուին մատենագրարաններում, վանքերում և անհատների մօտ եղած ձեռագրերի ցուցակները, Բարեբաղդարայ այս նախապատրաստական աշխատութիւնը հետզհետէ իւր լրումն է ստանում և կազմուել է արդէն ցուցակների մի փոքրիկ գրականութիւն, թէև գլխաւոր կեդրոնների Ս. Էջմիածնի, Երուսաղեմի և Վենետիկի Մխիթարեանց հարուստ մատենագրարանների ցուցակները գեռհրատարակուած չեն։ Այս անգամ հայ բանասիրական աշխարհին մի հաճելի ընծայ է տալիս Տիւրինգենի արքայական մատենագրարանի վարչութիւնը՝ հրատարակելով իւր նոր ձեռք բերած հայերէն ձեռագրերի ցուցակը, որ կազմել են պ. պ. Ֆրանց Նիկողաճու Ֆինկ և Լևոն

Գեանջեցեան, երկուսն էլ յայտնի հայ բանասիրութեան որպէս հանգէս հայագիտութեան, այժմ գաղարած, թերթի խմբագիրներ և աշխատակիցներս Իսկ պ. Ֆինկը 1903 թուին կազմել և հրատարակել է նաև հանգուցեալ Արգար Յովհաննիսեանի հայերէն ձեռագրերի մանրամասն ցուցակը:

Մատենադարանապետ Կարլ Գայգէր այս աշխատութեան մի նախաքան է կցել, ուր նկարագրում է ձեռագրերի այս ժողովածուի գնելու պատմութիւնը: Անցեալ դարու կէսերից Տիւրինգենի համալսարանն ունեցել է իւր հայագէտ ներկայացուցիչները յանձին Վելաէի, Հեմպէլի և մանաւանդ նորերս վախճանած ուսուցչապետ Ֆետտերի: Բայց մատենադարանը հայ ձեռագրերի ժողովածու չունէր, թէև հանգուցեալ Ֆետտերի յորդորմամբ վարչութիւնը պատրաստակամութիւն էր յայտնել գնելու: Այս ցանկութիւնն իրականացնելու յաջող առիթ է ներկայանում 1903 թուին, երբ պ. Ֆինկը մի նամակով յայտնում է Տիւրինից, թէ Էնֆիաճեանցը մի ժողովածու ունի և կամենում է ծախել: Այս ժողովածուն վաղուց յայտնի էր հասարակութեան Գիւտ աւագ քահանայ Ազանեանցի նկարագրութեամբ 1888 թ. Արձագանքի մէջ: Մտադրութիւն կար նոյն իսկ գնել այդ ժողովածուն Մ. Աթոռի մատենադարանի համար և հանգուցեալ Էնֆիաճեանցը պատրաստ էր շատ ձեռնտու պայմաններով զիջանել: Բայց պ. Գայգէր աւելի փութանջան գտնուեցաւ և 6000 ռուբլով ձեռք բերեց 104 հատորից բաղկացած այն ժողովածուն 1904 թուին: Ձեռագրերի համար վճարած վեց հազար ռուբլին, ինչպէս և ցուցակագրութեան և Ատլանի, որի մասին խօսք կլինի ներքի, տպագրութեան ծախսերը հոգացել է Էրնստ Սիգլին: Ահա այս ժողովածուի ցուցակն է գրուած մեր առաջ: Ցուցակագրող պ. Ֆինկը իւր կողմից ևս նուիրել է 5 ձեռագիր:

Ցուցակի մէջ նախ նկարագրուած են ձեռագրերը, ապա բովանդակութիւնը և ապա կազմուած է գերմանե-

րէն և հայերէն լեզուով յատուկ անունների և էական դադարների ցանկը, տալով և մատենագիտական տեղեկութիւններ: Բոլորն էլ ամենայն բարեխղճութեամբ, Այս ցուցակը իւր մեթոդով փոքր ինչ տարբերում է Տաշեանի և այն ուղղութեամբ կազմուած ցուցակներից այստեղ բաց են թողնուած յիշատակարանները: Մինչդեռ հէնց ինքը պ. Ֆինկը «Յուցակ Տփլիսեցի Արդար Յովհաննիսեանի հայերէն ձեռագրերի» աշխատութեան մէջ տալիս է մանրակրկիտ մանրամասնութիւններ ձեռագրերի բովանդակութեան նկարագրութեան մէջ, այստեղ մեջ չեն բերուած յիշատակարանները կամ նրանց էական հատուածները: Երևի հեղինակները խուսափել են Յուցակի ծաւալը չափազանց ընդարձակելուց և կամ բուն ցուցակի մաս չեն համարել այդ: Ըստ իս անհրաժեշտ է ցուցակների մէջ բերել այն յիշատակարանները, որոնք չեն տպագրուած ցուցակներում և նորութիւն են տալիս, իսկ տպագրուածների համար մատնանիշ անել տեղը, որովհետեւ տպագայում շատ դժուար կլինի այդ բոլորը ի մի հաւաքել և հայաց քաղաքակրթութեան պատմութեան այդ էական աղբիւրները բանասէր հասարակութեան մատչելի դարձնել:

Յուցակը կազմուած է այբուբենական կարգով և հետեւեալ բաժանմունքներն ունի. ա) աւետարաններ՝ 6 օր. +1 օր. պ. Ֆինկի նուէրը, բ) մեկնողական 10 ձեռագիր, գ) ժամապաշտական 21 ձ. +1 Ֆինկի նուէր, դ) խրատական 13 ձ. +1 Ֆինկի նուէր, ե) վարդապետական և վիճաբանական 8 ձ., զ) բանաստեղծական (տաղարաններ) 7 ձ., է) պատմական՝ 7 ձ., ը) փիլիսոփայական, լեզուաբանական, բնագիտական և բժշկական 18 ձ. +1 Ֆինկի նուէր, (թ) ժողովածուներ 12 ձ. +1 Ֆինկի նուէր: № 104-ը հատուկտօրների ժողովածու է և ոչ ամբողջ ձեռագիր:

Ժողովածուիս հնարուն ձեռագիրն է № 1 խոշոր երկաթագիր աւետարանը, ընդօրինակուած 899 թուի մի նախագաղափարից՝ 1113 թուին, դարդարուած մանրանկարներով և զարդադրերով: Պակասում են Մարկոսի

վերջում ժ.Ձ. 9—20, և Յուլի, մէջ շնացեալ կնոջ պատմութիւնը։ Ուշագրութեան արժանի է և № 22 Շարականը իւր հնութեամբ (1316 թ.) և տարբերութիւններով. համեմատուած է 1861 թ. էջմիածնում տպագրուածի հետ։ Մնացած չորս շարականները նոյնպէս՝ № 23, 24, 25 և 26՝ համեմատուած են և առանձնայատկութիւնները նշանակուած։ № 36 Տօնացոյց է, որ տարբերութիւններ ունի տպագրուածից տօնելի սրբոց վերաբերութեամբ։ № 43 Մելքիսեդեկ բանասիրի ներքողը Սիմէօն կաթողիկոսին, Արրահամ վարդապետին և ուրիշ ժամանակակիցների նուիրուած, գուցէ պատմական արժէք ունենայ ժ.Ը. դարու պատմութեան համար։ Իբրեւ նորութիւն և մելիքների պատմութեան ժ.Ը. դարու (1721—1722 թ.) վերաբերեալ աղբիւր յիշելի է Սարգիս եպիսկոպոս Զալալեանի Պատմութիւն աշխարհին Աղուանից աշխատութիւնը № 71, որի մէջ նկարագրուած են հայ մելիքների պատերազմները Պարսից և Օսմանցոց դէմ։ Հետաքրքրական է անշուշտ և № 74 Գիրք Եւկլիտա յաղագս տարերաց երկրաչափութեան, եթէ Մագիստրոսի թարգմանութիւնը լինի։ Մագիստրոսի իմաստասիրական թարգմանութիւններից ոչ մէկը տարաբաղդաբար մինչև այժմ գտնուած չէ։ Կան և երկրորդական նշանակութիւն ունեցող նորութիւններ ևս՝ պատմական յիշատակարաններ (№ 53 և 68), տաղեր ևլն։

Ընդհանուր առմամբ ժողովածուն աչքի ընկնող նորութիւններ չէ տալիս, քիչ են և հին ձեռագիրները, բայց և այնպէս իրաւունք ունէր մատենադարանապետ Գայգէր ժողովածուի ընդունելութեան օրը իւր տեսչութեան յանձնուած հաստատութեան համար տօնական համարել, որովհետեւ հայագիտութեան մշակութեան համար մի նոր առիթ է ստեղծուում Տիւրքինիների համալսարանում, եթէ մանտռանդ իւր կիսադարեան աւանդութեան հաւատարիմ մնայ այն, հրաւիրելով հայագէտ ուսուցչապետներ։ Այս նոր սկզբնաւորութեան երախայրիքն արդէն դրուած է մեր առաջ, որն ի սրտէ սղջունել կարող

ենք: Յետագայ տողերի մէջ դրախտութեան ենթարկուած Ատլասը մի բացատրական յաւելում է այս ցուցակին:

Բ.

Atlas zum Katalog der armenischen Handschriften.

1. Հայոց հնագրութիւն. Դր. Ֆինկը իւր համառօտ ուսումնասիրութիւնը հիմնել է միայն Տիւբինգենի հայ ձեռագրերի նոր ժողովածուի վերայ, որի մասին խօսք եղաւ նախընթաց հատուածի մէջ. այդ պատճառով էլ հնարաւորութիւն չի ունեցել հայոց գրերի փոփոխութեան բոլոր մանր, անցողական տարբերութիւնները տալ: Հեղինակի նպատակն է եղել միայն գաղափար տալ հայոց գրերի գլխաւոր տեսակների մասին և դիւրացնել նորուս հայագէտների գործը ձեռագրերի ուսումնասիրութեան ժամանակ: Սակայն այս համառօտութիւնն արգելք չէ, որ ընթերցողը հայագիտութեան այս անմշակ ճիւղի մասին բաւական որոշ գաղափար ստանայ:

Հեղինակը հայոց գրերը բաժանում է հինգ տեսակի: Առաջինն է սկզբնագիր կամ գլխագիր կոչուածը, իսկ մեր մէջ մեծ երկաթագիր: Երկրորդը կէս սկզբնագիր, որ առաջին տեսակի նման դարձեալ գլխագիր է, միայն այն տարբերութեամբ, որ սորա գծերը անկիւնաւոր են, այն ինչ առաջինը կլոր: Այս երկրորդ տեսակը երկուսի է բաժանուում, հայ բանասիրութեան մէջ սովորաբար միջին և փոքր երկաթագիր անուամբ, իսկ ըստ Տաշեանի միջին Մեսրոպեան երկաթագիր և փոքր Մեսրոպեան երկաթագիր:

Երրորդ տեսակի գիրն է ներկայ տպագրականը երեք ստորաբաժանումներով, բոլորագիր, նոսրագիր և շեղագիր: Բոլորագիրն իսկապէս կլոր չէ, ինչպէս սկզբնագիրը կամ մեծ երկաթագիրը, այլ անկիւնաւոր: Բայց այդ անունն ընդհանրացած է հայ բանասիրութեան մէջ, և դժուար է այլ ևս փոխել: Այսպէս հեղինակը գրութեան

հինգ տեսակ է ընդունում հակառակ Քարամեանի, որ 7, և Տաշեանի, որ 10 տեսակ գիր է ընդունում անցողականներով:

Մի առանձին գլխի մէջ հեղինակը հիմնուելով իւր նախորդների ուսումնասիրութեան և տուած նիւթերի վերայ, յատկապէս հ. Տաշեանի*, աշխատում է եւրոպացի հայագէտների համար պարզել հայ հնագրութեան արժէքը ձեռագիրների հնութիւնը որոշելու համար: Թուականով մեզ յայտնի ամենահին գիրը Մոսկուայի Լազարեան ճեմարանի 887 թ. գրուած աւետարանն է**։ Արդեօք ս. Մեսրոպի գտած գիրը պահուած է այս ձեռագրի մէջ 400 տարուայ ընթացքում, կասկածելի է: Բայց այս կարծիքն են յայտնել Քարամեանց† և Չազըճեան††: Դժուար է նայնպէս որոշ կարծիք յայտնել նաեւ յետագայ դարերի մասին, թէ ո՞ր գիրը ո՞ր դարում իշխող է հանդիսանում: Հեղինակը մինչև այժմ հրատարակուած ցուցակների հիման վերայ թուականներով յայտնի ձեռագրերի ցանկ է կազմում և դասաւորում ըստ տեսակի և ըստ դարերի, բայց ցուցակների պակասութեան և ուրիշ պատճառներով դժուար է այդ վիճակագրական տախտակից հիմնաւոր և ճիշդ եղբակացութիւն հանել: Սակայն իրողութիւն պէտք է լինի, որ որոշ շրջաններում դրի այս կամ այն տեսակը աւելի իշխող է եղել, թէև միւս տեսակներն էլ հանդիպում են: Գրի մի նոր

* Ահնարկ մը հայ հնագրութեան վրայ. Վիեննա, 1898 և Յուդակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց, Վիեննա, 1895.

** Տաշաբաղդաբար մինչև այժմ չստուգուեցաւ, թէ եւրոսաղեմի ձեռագիրը, յիշուի ԾԱ. (602) թուի գործ է, թէ ընդօրինակութիւն նոյն թուականի մի ձեռագրից: Հանդէս Ամսօրեայ 1901 թ. լիւար.

† Verzeichnis der arm. Handschriften der königl. Bibliothek zu Berlin. 1888.

†† Նիւրեմ Զազըճեան. Տեղեկութիւն հայերէն հին ձեռագիրներուն վրայ. Վիեննա 1848.

տեսակի ծագումն ու հետզհետէ դերիշխող դառնալը երկար ժամանակի դորձ էր բնականաբար, ուրեմն և միայն ս. Մեսրոպի գծագրած տառերի համար կարող ենք ասել, որ միանգամից իշխող են եղել, երկաթագրի տեսակների հետ, որ հնում աւելի դերիշխող էին, դորձ են ածուժ և բոլորագրի, նոտրագրի և շեղագրի տեսակները, առաջինը 999 թ., երկրորդը 1313, իսկ երրորդը՝ 1041 թուին։ Կաւելացնենք մենք, որ Մ. Աթոռի մատենադարանի Գ. ց. № 102 ձեռագիրը 975 թ. դորձ է, հին բոլորագիր, իսկ Կ. ց. 899 (919) շեղագիր է, գրուած 1215 թ., անհատական բնութիւն կրող և շատ նման ներկայ գրութեան ձևին (տ. յիշատակարան)։

Բոլորագիրը միւսներից աւելի հին է, իսկ նոտրագիրը հին է շեղագրից իւր գերիշխանութեամբ, բայց ոչ ծագմամբ։ Բոլորագրից են ծագել նոտրագիրն ու շեղագիրը, բայց վերջինը աւելի ուշ է ընդարձակ գործածութիւն ստացել։ Դժուար է հաստատել, թէ կլոր երկաթագրից է ծագել անկիւնաւորը, քանի որ երկուսն էլ հին են և վերջինս արդէն դորձ է ածուած 783 թ. մի արձանագրութեան մէջ։ Սակայն իրողութիւն է, որ միջին կամ անկիւնաւոր երկաթագիրը աւելի ուշ է տիրապետող հանգիստացել, քան կլոր կամ մեծ երկաթագիրը։ Աւելի ուշ շրջաններում դեռ ևս յատկապէս աւետարանների համար, դորձ է ածուժ հին, կլոր երկաթագիրը, թէև սովորական չէր։

Հեղինակը իւր այս համառօտ տեսութիւնները լուսաբանելու համար տուել է հնագրութեան մի քարտէս 24 օրինակներով։

*
* *

2. Փոքր Հայաստանի մանրանկարչութիւնը. Strzygowski, Իրացի համալսարանի ուսուցչապետը, յայտնի է հայ բանասիրութեան իւր էջմիածնի աւետարանը գրուած քով։ Նա յօդուածներ է գրել նաև Հանգէս Ամսօրեայի

և Byz. Zeit.-ի մէջ XIV. 1905 թ. Մլքէ թագուհու աւետարանի զարդանկարների մասին, Իսկ իբրև բիւզանդական արուեստի մասնագէտ շատ պատուաւոր տեղ է բռնում հնագէտների մէջ և բոլորովին նոր հայեացքներ է յայանել բիւզանդական արուեստի ծագման և նշանակութեան մասին: Ահա այս վարպետ ձեռքի արդիւնքն է և այն հմտալից ուսումնասիրութիւնը, որ դրուած է մեր առաջ: Ուսումնասիրութեան նիւթ է տուել Տիւրինգենի համալսարանի Էնֆիանճեանից ձեռք բերած Ժողովածուի Ma XIII. 1 աւետարանը, որ ընդօրինակուած է 1113 թ. Դրազարկում՝ 893 թուի մի նախագաղափարից: Կասկածելի է, որ նախագաղափարն էլ դրուած լինի Դրազարկում, թէև պ. Ստչիգովսկին հակուած է այդպէս ընդունելու, որովհետև մենաստանի այդչափ հնութեան մասին ոչ մի տեղեկութիւն չունինք: Դրազարկն սկսում է դեր խաղալ մեր պատմութեան մէջ ԺԲ. դարու սկզբից և հաւանօրէն նորա ծագումը Կիլիկիայի իշխանութեան ծագման հետ էր կապուած: Այդ գէպքում շփոթութիւն պէտք է ընդունել երկրորդ յիշատակարանի մէջ, Ձեռագրի սկզբից պակաս է մինչև ԺԲ. 23, դորա հետ պակաս են սկզբի խորաններն ու մանրազարդերը, ինչպէս և Մատթէոսի սյառկերը:

Առաջին գլխի մէջ հեղինակը նկարագրում է Մարկոսի, Ղուկասի և Յովհաննու պատկերներն ու նրանց աւետարանների սկզբնազարդերը: Երեք աւետարանիչները նստած են աթոռի վերայ, հաւանօրէն նստած պէտք է լինէր և Մատթէոս, որովհետև շատ հազուադիւր է ձեռագրերի մէջ, որ աւետարանիչները տարբեր ձևով նկարուին: Սովորաբար Փոքր-Ասիայի մանրանկարչութեան մէջ, որից անցել է Կիլիկիայի Հայերին և Բիւզանդացիներին, աւետարանիչները նստած են, այն ինչ Ասորիքում և Եգիպտոսում կանգնած: Արդարև էջմիածնի փղոսկրեայ աւետարանի մէջ աւետարանիչները կանգնած են և չեն դրուած աւետարանների սկզբում, այլ ձեռագրի՝ կանոնների խորաններից յետոյ զոյգ զոյգ՝ կիսախորանների

տակ՝ Որքան յիշում ենք Ջիւանշիրի գաւառի Մեծշենի աւետարանի մէջ (Ժ. դարու գործ) աւետարանիչները կանգնած են և սկզբում գրուած, կոպիտ գործ։ Մեր մատենադարանի № 236 աւետարանի մէջ, գրուած 1033 թ. բոլոր աւետարանիչները նկարուած են կանգնած, աւետարանի սկզբում։ Թարգմանչաց վանքի աւետարանի մէջ, որ այժմ գտնուում է Մ. Աթոռի մատենադարանում և մանրանկարչութեան պատմութեան համար ամենակարևոր ձեռագիրներից մէկն է, ծաղկազարդած 1232 թ. Յովհաննէս աւետարանիչն է միայն կանգնած, Մատթէոս նստած է, իսկ միւսները տարաբաղդաբար չկան։ Ուշագրութեան արժանի է համարում հեղինակը Տիւրինդենի աւետարանի Ղուկասի տիպը. այն ինչ Մլքէ թագուհու աւետարանի մէջ Ղուկասը տոնդուրաւոր մի արեղայ է, նորածիլ միրուքով, կարմրաշէկ մազերով, սովորական դարձած մի տիպ (?), այստեղ ընդհակառակ սևամազ է, առանց տոնդուրի, երկար ու սպիտակ միրուքով։ Տարբեր է նոյնպէս և հագուստը Մարկոսից և Ղուկասից։ Նկարիչը գաղափար չունի արուեստի նրբութեան, նմանութեան և տարածութեան մասին, բայց ճարտար է զարդանկարութեան մէջ։ Օրնամենտներ է տալիս ճարտարապետական աշտարակներ կամ յատակներ նկարելիս։ Աշտարակների ճարտարապետութեան և Միջագետքում զարգացած, իսկ հռոմէական-քրիստոնէական ժամանակներում նաև Ասորիք մտած, ճարտարապետութեան հետ նմանութիւն է գտնում հեղինակը։ Սխառն գմբեթները արևելեան են։ Ազիւսագարդ շինութիւնները նմանութիւն են հռոմէական կայիւրէտում կան արուեստի նման երևոյթներ։ Յովհաննէս աշտարակը և սկզբնազարդը պատաճե կամարով բնորոշ է արուեստի որոշ տեղի՝ Փօքր Ասիային կամ Արևելքին՝ Կարմաղիան տիրապետութիւնից առաջ։ Աւետարանիչների նշանակներն էլ (Symbol) արևելեան դրոշմ են կրում, օրինակ Մարկոսի առիւծը՝ Սասանեան է։ Առ հասարակ նկարիչը իւր պատկերները ներկայացնում է մանրազարդօրէն. նորա պատկերներն ու

ճարտարապետական աշտարակները, մանրազարդերը կարելի է վերալուծել որոշ մոտիւնների, դժերի հիւսուածներ, արմաւենիկների բարունակներ, ցանցաձև կամ ուսկանաձև հիւսուածք, ճոխ շերտազարդեր, գաւազան (Bäumchen), զիկզակներ (տաւամնաձև, ձուաձև) և յն։

Զարդանկարները վերլուծելուց յետոյ՝ հեղինակը կամենում է որոշել նրանց ծագումը, արդեօք անտիկ են, հին արեւելեան, բուն հայոց, պարսկական թէ՛ բիւզանդական կամ Սելջուկեան։ Հեղինակն աչքի առաջ ունենալով Էջմիածնի փղոսկրեայ և Վենետիկի Մխիթարեանց Մէրէ թաղահաւաքաւանների մանրանկարչութիւնը, այն կարծիքն էր յայտնել, թէ Հայոց մէջ ասորական մանրանկարչութիւնից յետոյ սկսուում է բիւզանդական ազդեցութիւնը։ Բայց այժմ նոր նիւթերի վրայ հիմնուելով պնդում է, որ թէ Հայոց և թէ բիւզանդական գեղարտիւ արուեստը կախումն ունին պարսկականից, որ միջին դարերում իշխող էր արեւելքում։ Տիրինգենի աւետարանը Հայոց արուեստի պատմութեան համար այն կտրիւր նշանակութիւնն ունի, որ ցոյց է տալիս, թէ Հայերն անմիջապէս Պարսիկներից են իւրացրել ձեռագրերի այս արուեստը և ոչ միջնորդապէս Բիւզանդիայից։ Գուցէ նոյն իսկ Բիւզանդացիք Հայերի միջնորդութեամբ իւրացրած լինին սկզբում և ապա բարձր զարգացման հասցնելուց յետոյ, Հայերին աւանդած Սելջուկեան տիրապետութեան ժամանակ, Տիրինգենի աւետարանը ապացոյց է, որ մեծ Հայաստանը այնպէս չէր ենթարկուած բիւզանդական արուեստի ազդեցութեան, ինչպէս Կիլիկիան էր, այստեղ թէպէտ նմանութիւններ կան բիւզանդական Կոմնենների շրջանի մանրազարդերի հետ, բայց կախումը պարսկականից է։ Վերջին տարիների ուսումնասիրութիւնը բոլորովին մի նոր հայեացք է յառաջ բերել արուեստի պատմութեան լուսաբանութեան մէջ. միջերկրականի ավերը չեն միայն արուեստի որորանները հին Յունաստանի անկումից յետոյ, այլ և արեւելքը, Ասիան, յատկապէս Իրանն ու Միջագետքը որպէս կեդրոն, այստեղից ազդեցութիւնը

տարածւում է դէպի արեւելեան Ասիա, Հնդկաստան, ինչպէս և դէպի Բիւզանդիա, իսլամական երկիրները հարաբաւում և ապա սլաւոնական-գերմանական ազգերի մէջ։ Տիւրքերի ձեռագրի վերայ հազիւ հելլենական ազգեցութեան հետքեր նկատուին, որովհետեւ այս մանրանկարների ծագման ժամանակ հելլենական տարրերն արդէն դուրս էին մղուած կամ արեւելեան ձեռփոխութեան ենթարկուած։ Օրնամանտների համեմատութիւնը IX. դարու Հայոց ճարտարագետութեան և արեւելեան ազգերի՝ միջին Ասիայի, Միջագետքի, Պարսկաստանի, կոպտական արուեստի մանրադարձերի հետ, ցոյց է տալիս, որ Տիւրքերի աւետարանի դարձերն էլ արեւելեան են։ Մարկոսի սկզբնաւորութեան ճակատի եզերադարձերը գոյնզգոյն թեւփերից, բաւական է այս արուեստի հայրենիքը որոշելու համար, այն է Կապադովկիայի և Միջագետքի մէջ ընկած երկրները։

Որպէս աղներեւ տպացոյց, թէ Տիւրքերի աւետարանի զարգանկարների ծագումն արեւելեան է և ոչ արեւմտեան՝ բիւզանդական, ծառայում են սկզբնադրերի և լուսանցքների զարդերը։ Առաջին տողը դրուած է խեցոսկով (Muschelgold), այն ինչ Բիւզանդացիք այդ ժամանակ թերթոսկի (Blattgold) են գործածում։ Սկզբնադրերի զարդերի մոտիւները նման են պարսկական արուեստին։ Հեղինակի կարծիքով բուն Հայաստանի ձեռագրերը այդպիսի սկզբնադրեր չունին. երեւի նա հիմնւում է մեր փղոսկրեայ և կաղարեան ճեմարանի աւետարանների վերայ, սակայն մենք ունինք այնպիսի ձեռագրեր ևս բուն Հայաստանում գրուած, որոնք Տիւրքերի աւետարանի յար և նման սկզբնադրեր ունին։ Այսպէս է օրինակ Թարգմանչաց վանքի մեծ երկաթագրով աւետարանը։ Լուսանցքում դրուած մանեկաձե զարդերը նոյնպէս, ծածկերի հիւսուածքով կամ ուրիշ եղանակաւորութիւններով յատուկ են միայն արեւելեան արուեստին*, բիւզանդական ձե-

* Մեր մատենադարանում մի քանի ձեռագրեր կան,

ռագրերը նոյն հիւսուածքով միայն սկզբնատառեր ունենալնդ հակառակ արեւելեան ազգերից Կոպտերի մէջ նկատուած է նմանութիւն Հայոց հետ: Այդ մանեկաձէ լուսանցադարձերի մէջ նշանակուած են գլուխների բաժանմունքները և ունին այն բոլոր դարձաձևերը, որոնք յատուկ են մեծ պատկերներին:

Արուեստի հայրենիքը որոշելու համար աւելի կարևոր են լուսանցքի դարձերը, որոնք կազմուած են սկզբնագրերի վերջաւորութիւնների մտախներից, այսինքն կիսարմաւենիկներից և հիւսուածքներից: Կեդրոնում կամ ներքևի մասում կազմուած է մի մանեակ և նորա շուրջը կամ վերևի մասում կապոյտ կիսարմաւենիկներով շրջափակուած: Վերին և ներքին մասերում կան ութաձև հիւսուածքներ: Եւ այս դարձերը կրկնում են բազմազան եղանակաւորութիւններով: Արուեստի ծագումը լուսաբանելու համար գոցանից ամենից աւելի նշանակութիւն ունի մէկը, որ փոքրիկ փոփոխութիւններով կրկնում է երկու անգամ: Հորիզոնական միմեանց դէմ երկու արմաւենիկներ հիմք են կազմում այդ դարձին, իսկ նրանց ցողունները կտրելով միմեանց մի ձուած և են կազմում, ապա նորից խաչուելով՝ բարձրանում են զուգահեռաբար երկու կիսարմաւենիկներ: Ցողունների միմեանց կտրած տեղը կազմուած են կանաչ ձուածներ: Զուգահեռաբար վերև տարուած հակադիր ծայրերը յիշեցնում են արաբական գերեզմանաքարերը Կայիրէում, որոնք 806 — 906 թուերի գործ են համարւում: Միմեանցից այսչափ հեռու ըն-

որոնք մեծ Հայքի մանրանկարչութեան ուսումնասիրութեան համար շատ կարևոր նշանակութիւն ունին, նոքա ևս Տիւրքի-դենի աւետարանի նման լուսանցքի և մանեկաձէ դարձեր ունին յաճախ նման մտախներով: Առ հասարակ այդ ձևադրերի արուեստը տարբեր դրոշմ է կրում, քան Կիլիկեան շրջանի կամ բիւզանդական մանրանկարչութիւնն է: Ուշագլուխեան արժանի են յատկապէս բովանդակութեան լուսաբանութիւնը լուսանցքում պատկերներով, կենդանիները, թռչունները, դարձերը:

կած երկրներն արուեստի նմանութիւնը հեղինակը բացատրում է Պարսկաստանի միջնորդութեամբ: Նոյնը կարծում է և Կոպտական ու Հայոց մանրանկարչութեան նմանութեան համար: Պարսկաստանի ազդեցութիւնը եզրկոտորում աւելի վաղ էր, քան Բիւզանդիայում: Հաւանորէն միաժամանակ այդ ազդեցութեան ենթարկուել է և Փաքր Հայաստանը: Հեղինակի կարծիքով այս շարժման հիմքը հաւանորէն Սասանեան պահլաւ ձեռագրերն են եղել, որոնց մանրանկարչութեան մնացորդներն իսկ մինչև այժմ չեն դաժնուած: Միջին պարսկական նկարչութիւնը դեկորացիայի բազմատեսակ սխտեմ է ունեցել, որի փոփոխակները շարունակուեցան Կոպտական, իսլամական, հայկական, բիւզանդական և արևմուտքի ձեռագիրների զարդանկարչութեան մէջ:

Տիրբինգենի աւետարանը, ինչպէս առաջ էլ տեսանք ընդօրինակուած է 1113 թուին, մի հին 893 թուի նախադադարից, իսկ վերջինս «յընտիր գաղափարէ սրբոյն Սահակայ թարգմանչի»: Չակերաների մէջ առնուած բառերն անշուշտ ապացոյց չեն, թէ 893 թուի նախադադարն էլ իրօք ս. Սահակի «գաղափարից» է ընդօրինակուած: Մեր ձեռագիրների մէջ հաղուադիւտ չէ այդ արտայայտութիւնը, որի ծագումն անշուշտ հին է: Այսպիսով այս աւետարանի ծննդաբանութիւնը հասնում է թ. դարուց էլ աւելի հին մի օրինակի, բայց միայն բնագրի վերաբերութեամբ այդ ասել կարելի է: Մանրանկարներն էլ արդեօք ընդօրինակուած են «ս. Սահակի», կամ 893 թուի գաղափարներից: Հեղինակը դժուարանում է պատասխանել այս հարցին, մանաւանդ ձեռագիրը բուն Հայաստանում գրուած չէ: Մինչև այժմ յայտնի, հնագոյն ձեռագրերի մանրանկարները, ինչպէս էջմիածնի փղոսկրեայ և Մլքէ թագուհու աւետարաններինը, ասորական տիպ են: Հեղինակին յայտնի չեն Հայոց մէջ բիւզանդական ծագմամբ այդչափ հին մինիատիւրներ: Մեր մատենադարանում Պահլաւունի կաթողիկոսների սեպհահականութիւն եղած մի աւետարան կայ, գրուած 1066

թ., բիւզանդական գեղեցիկ մանրանկարներով և ճակատադարձերով: Նա հետեւեալ կերպով է բացատրում այդ պարսկական կնիք կրող արուեստի ծագումը: Դ. դարից արդէն միջերկրականի երկրներում երեւում են Պարսից արուեստի մոտիւներ վաճառականների, վանականների ձեռքով իբրեւ վաճառման ապրանք: Ազգերի գաղթականութեամբ այդ արտադրութիւնները տարածւում են Իտալիայում և հիւսիսում, իսկ Բաղդադի և Դամասկոսի իսլամական մոտիւները Իսպանիայում: Բուլղարական թուրքերը միջին Ասիայի մոտիւները բերում են Բալկան, այսպէս էլ հաւանօրէն ձեռագիրների զարդանկարները հեռաւոր արեւելքից անցնում են դէպի Կիլիկիա և Բիւզանդիոն Սելջուկեան արչաւանքների հետ: Նրանց միջնորդութեամբ հաւանօրէն Պարսկաստանի արեւելեան մասերում ծաղկած արուեստն անցնում է դէպի արեւմուտք: Բուն Հայաստանը չէ այդ նորութիւն բերողը, որ այն ժամանակ ընկած էր քաղաքականապէս, և քաղաքակրթապէս ևս ենթարկուած նուաճողներին, այլ Կիլիկիայի թագաւորութիւնը: Մեծն Հայաստանի գիտնականները գաղթում և հաստատուում են նոր տէրութեան հարաւային սահմաններում: Արուեստի և գիտութեան կեդրոն է հանդիսանում Դրազարկը իւր միաբաններով: Խաչակրաց արչաւանքների ժամանակ Կիլիկիան Պարսկաստանի, միջին և արեւելեան Ասիայի և արեւմուտքի հաղորդակցութեան հանգոյցն է կազմում, ինչպէս ամեն բանի, այնպէս էլ Բիւզանդացիների, Հայոց և ուլաոնական մինիատիւրների օրնամենտական ոճի: Հեղինակը խոստանում է Դրազարկի արուեստի լուսաբանութեան դարձեալ դառնալ:

Տիւրքերի հայ ձեռագիրների ժողովածուի մէջ երկու աւետարաններ էլ կան Ma XIII, 3 և XIII, 4, որոնք նոյնպէս արժանի են ուշադրութեան: Վերջինը գրուած է 1664 թ. Կ. Պօլսում, բայց պահել է հայոց օրնամենտական զարդերի հին տիպը: Կանոնների խորաններն ու կամարները պարսկական դրոշմ ունին, որ քաղաքացիութիւն է ստացել հետդհետէ հայ և բիւզանդական արուեստի

մէջ, Այս ձեռագրի վրայ կարելի է նկատել այն բոլոր փոփոխութիւնները, որ հայ մանրանկարչութիւնը կրել է ժԲ—ԺԷ. դարը: Լուսանցքում կան պատկերներ, որոնց ծագումը հին է և նկատելի Միջագետքում 586 թուին գրուած Բաբուլայի Աստուածաշնչի մէջ:

Գ. վ. Յովսէփեան



ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐԱԵՐ*

1. Սուքիաս Եպիսկոպոս Պարզեանցի նամակը. Երևան, 1907 թ. գինն է 60 կ.
2. Ազգային եկեղեցի Կ. վ. Բագու 1907 թ. գինն է 20 կ.
3. Կրօնի և կրօնի գիտութեան էութիւնը ըստ Տրեօլլի, փոփոխադրեց Երուանդ վարդապետ. Վաղարշապատ 1907 թ.
4. I Մի համեստ առաջարկութիւն գիւղական քահանայացուներին. II Անկեղծ բարեգործը. Կ. Ապրիլեան, Թիֆլիզ, 1905 թ. գինն է 15 կ.



* Ստացուած գրքերի մասին այսուհետեւ կանոնաւոր կերպով գրախօսութիւններ կ'ղրուին: